



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳԻԵՐՈՒ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ԱՄՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Հ.Մ.Ը.Ս.Ի «ԱՐԱՐԱՏ» ՄԱՍՆԱԾԻԴԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ



Թեմիս բարեխնամ
Առաջնորդ Բարձր. S.
Մուշեղ Արք. Մարտիրոսեան
Երեքշաբթի, 13
Դեկտեմբերի Երեկոյեան,
Ազգ. Առաջնորդարանի
«Սիլահեան» դահլիճին մէջ
ընդունեց այցելութիւնը
Հ.Մ.Ը.Ս.Ի «Արարատ»
մասնաճիւղի վարչութեան
ներկայացուցիչներուն,
գլխաւորութեամբ
վարչութեան

ատենապետուիիին՝ Տիկին Յելիկ Խաղովեանի: Յանդիպումին մասնակից
եղան Հ.Մ.Ը.Ս.Ի Կեդրոնական Վարչութեան անդամներն Տիար Վիգեն
Դաւթեան եւ Ազգ. Վարչութեան ատենապետուի Տիկին Ոհմա Պօղոսեան
ու անդամ Տիար Վահան Պօտիկեան:

Յիւր Վարչականները Եկած Եին Առաջնորդ Սրբազանին
շնորհակալութիւն յայտնելու՝ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա.
Կաթողիկոսի հովուապետական այցելութեան առիթով, մասնաճիւղի
հիմնադրութեան 33ամեակի տօնախմբութեան Նորին Ս. Օծութեան
ներկայութեան ու պատգամին համար: Անոնք նաեւ տեղեկութիւններ տուին
մասնաճիւղի գործունեութեան ու ծրագիրներուն մասին, մանաւանդ, որ
Հ.Մ.Ը.Ս.Ի այս կենսունակ անդամը Վերջերս ընտրած է նոր Վարչութիւն:
Տիար Վիգեն Դաւթեան, իր կարգին, լուսաբանութիւններ տուաւ
մասնաճիւղի գործունեութեան տարիներու ընթացքին արձանագրած
բարելաւման ու իրագործման միջոցներուն մասին, նշելով, որ շուրջ 2,000
անդամ հաշուող մասնաճիւղը կը գործէ արհեստավարժ մօտեցումով:

Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութեան ատենապետուիին
գևահատանքով արտայայտուեցան «Արարատ» մասնաճիւղի Հ.Մ.Ը.Ս.ական
առաքելութեան մասին եւ մաղթեցին նորանոր նուաճումներ: Անոնք նաեւ
վեր առին Ազգ. Առաջնորդարանին ու Հ.Մ.Ը.Ս.ին միշեւ արդիւնաւոր

գործակցութեան վիորձառութիւնը եւ հաստատեցին, թէ այս գործակցութիւնը պիտի շարունակուի ի նպաստ նոր սերունդին առողջ դաստիարակութեան:

Յանդիպումի աւարտին, հիւր Ներկայացուցիչները Առաջնորդ Սրբազնին յանձնեցին գեղեցիկ կազմով Աստուածաշունչ մը:

HOMENETMEN "ARARAT" CHAPTER BOARD MEMBERS VISIT THE PRELACY



On Tuesday, December 13, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, met with Homenetmen "Ararat" Chapter board members at the Prelacy "Sulahian" Reception Room. The delegation was led by Chapter Chairlady Mrs. Helik Issagholian. Homenetmen Central Executive member Mr. Vicken Tavitian,

Executive Council Chair Mrs. Rima Boghossian and member Mr. Vahan Bezdikian participated in the meeting.

The guests first and foremost thanked the Prelate for the visit of His Holiness Catholicos Aram I to the "Ararat" Chapter in October on the occasion of their 33rd anniversary. The guests also reported on the current and future endeavors of their chapter. Mr. Vicken Tavitian further elaborated on the successes of the "Ararat" Chapter in recent years, noting that it counts more than 2,000 members.

The Prelate and Mrs. Rima Boghossian both commended the members for their service and wished them success in future endeavors and missions, as well as reaffirmed that the collaboration between the Prelacy and Homenetmen will remain strong and continue for years to come.

At the conclusion of the meeting, the guests presented the Prelate with a beautiful illustrated Bible.